«Դանակը ոսկորին է հասել»
Հրատապ զեկույց Լեռնային Ղարաբաղի Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում հումանիտար ծանր ճգնաժամի վերաբերյալ

25 ապրիլի 2023թ.

Կոնտակտային անձ՝ Էմիլիա Միքայելյան
info@cftjustice.org
2100 Մոնթրոսի պող. #715, Մոնթրոս, Կալիֆորնիա 91020
Ճշմարտության և արդարության կենտրոնը 501(c)(3) գրանցված կորպորացիա է
ԱՄՆ դաշնային հարկ վճարողի հաշվառման համար # 87-1681664.

@CFTJustice @CFTJustice @CFTJustice

Ներածություն

1. Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (ՃԱԿ, The Center for Truth and Justice) 501(c)(3) գրանցված շահույթ չհետապնդող ամերիկյան կազմակերպություն է, որը գտնվում է Կալիֆորնիայի Լոս Անջելես քաղաքում: Կենտրոնը փաստագրում է 2020թ. Ղարաբաղյան պատերազմից ի վեր հայերի նկատմամբ մարդու իրավունքների խախտումները և պատերազմական հանցագործությունները: Ճշմարտության և արդարադատության կենտրոնը տարածաշրջանում ստեղծել է փաստահավաք ենթակառուցվածք և անձամբ տուժողներից հավաքագրում է նրանց վկայությունները: Կենտրոնի կողմից կիրառվող՝ ապացույցների հավաքագրման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ Մեթոդաբանություն բաժնում: Կենտրոնը պահպանում է ապացույցները և դրանք հասանելի դարձնում կրթական նպատակների, շահերի պաշտպանության և հնարավոր դատական գործընթացների համար: ՃԱԿ-ի թիմը կազմված է ԱՄՆ-ում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում գործող փաստաբաններից և իրավաբանական ֆակուլտետի ուսանողներից, ինչպես նաև մարդու իրավունքների ջատագովողներից և այլ մասնագետներից: ՃԱԿ-ի կողմից իրականացվող աշխատանքը նպատակ ունի առավել լսելի դարձնել մարդու իրավունքների խախտման, ներառյալ խտրականության, էթնիկ զտումների, տեղահանումների, պատերազմական հանցագործությունների, զանգվածային վայրագությունների և ցեղասպանության զոհ դարձածների ձայնը: ՃԱԿ-ը կրթում և պատրաստում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի թիմերին փաստական տվյալների վրա հիմնած հարցազրույցների անցկացման մեթոդներին՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային իրավական չափանիշներին և ապացույցների հավաքման, պահպանման և ներկայացման կանոններին: Կենտրոնի նպատակն է լինել մարդու իրավունքների խախտումների և պատերազմական հանցագործությունների արդյունքում զոհված կամ տուժած անձանց կենդանի տարեգրություն: Որպես տուժողների վկայությունների մշտական պահոց՝ Կենտրոնը ձգտում է խթանել կրթությունը, կարեկցանքը, արդարությունն ու փոփոխությունները:

2. ՃԱԿ-ը պատրաստել է սույն զեկույցը՝ հրատապ կերպով ուշադրությունը հրավիրելու խորացող հումանիտար ճգնաժամի վրա, որի առաջ կանգնած է Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչությունը՝ շարունակվող շրջափակման պայմաններում: Մասնավորապես, Կենտրոնը ցանկանում է ուշադրություն հրավիրել Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում սննդի բացակայության և դրա հետևանքով սովի վերահաս վտանգի վրա, որոնք Ադրբեջանի վերջին գործողությունների արդյունքում էլ ավելի են մեկուսացել:

3. 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Բերձորի/Լաչինի միջանցքը, որը էթնիկ հայկական անկլավը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության և միջազգային հանրության հետ կապող միակ ճանապարհն է, շարունակում է մնալ կայուն արգելափակված իրենց այսպես կոչված ադրբեջանական «էկոակտիվիստներ» անվանող անձանց կողմից: Սակայն բազմաթիվ զեկույցներ ցույց են տալիս, որ այդ ենթադրյալ ակտիվիստներն, ըստ էության, Ադրբեջանի կառավարության գործակալներ են, որոնցից շատերն ամուր կապեր ունեն Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունների և զինված ուժերի հետ[1]: 2023 թվականի փետրվարի 22-ին ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինը՝ Արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ), պարտավորեցրել է Ադրբեջանին «ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ»[2]: Ժամանակավոր միջոցների կիրառման մասին ԱՄԴ-ի որոշումները պարտադիր են վիճելի գործերով կողմերի համար[3]:

4. Ավելի վաղ՝ 2023թ. դեկտեմբերի 12-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն, ներկայացրել էր միջանկյալ միջոցներ՝ Ադրբեջանին պարտավորեցնելով «ձեռնարկել իր իրավասության շրջանակներում գտնվող բոլոր միջոցները՝ Հայաստանում բուժվելու կարիք ունեցող ծանր հիվանդների կամ առանց կացարանի կամ գոյատևման միջոցների ճանապարհին արգելափակված այլ անձանց անվտանգ անցումը «Լաչինի միջանցքով» ապահովելու համար»[4]: 39-րդ կանոնի համաձայն ՄԻԵԴ-ի միջանկյալ միջոցները պարտադիր են վիճելի գործերով կողմերի համար[5]:

---

[1] Տե՛ս Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան հիմնադրամ»-ի և Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի համատեղ զեկույցը «Արցախը Հայաստանին և արտաքին աշխարհին կապող միակ կյանքի ճանապարհն արգելափակված ադրբեջանական կառավարական «էկոակիվիստ» գործակալները» (2023թ. փետրվար), https://tatoyanfoundation.org/wp-content/uploads/2023/02/ECO_ACTIVISTS_22.02.2023V2.pdf; Սիմոն Մաղաքյան «Ինչպես է Ադրբեջանը շրջակա միջավայրի պաշտպանությունը որպես զենք օգտագործել էթնիկ զտումներ իրականացնելու համար» (*Time*, 22 փետր. 2023թ), https://time.com/6257467/armenia- azerbaijan-nagorno-karabakh-lachin-environment-icj/

[2] *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի)* (ժամանակավոր միջոցներ) 2023թ., կետ 67, https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180- 20230222-ORD-01-00-EN.pdf

[3] Տե՛ս, օրինակ, *LaGrand (Գերմանիան ընդդեմ Միացյալ Նահանգների)* (Գործի էությունը) [2001] ԱՄԴ Ակտ 466, կետ 109; *«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառումը (Գամբիան ընդդեմ Մյանմայի)* (Ժամանակավոր միջոցներ) [2020] ԱՄԴ Ակտ 3, կետ 24

[4] «Եվրոպական դատարանը որոշում է կայացրել առաջարկել միջանկյալ միջոցներ «Լաչինի միջանցքում» (ՄԻԵԴ մալմլո հաղորդագրություն 401 (2022), 21 փետր. 2022թ.), https://hudoc.echr.coe.int/eng-press?i=003-7528728-10337270

[5] Տե՛ս «*Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի*», հայց No 46827/99 և 46951/99, (ՄԻԵԴ, 4 փետր. 2005թ) կետ 100; «*Օլաեչեա Կաուասն ընդդեմ Իսպանիայի*» հայց No 24668/03 (ՄԻԵԴ, 10 օգոստ. 2006թ) կետ 81

I. Սովի վերահաս վտանգ Լեռնային Ղարաբաղի գյուղերում

5. Ինչպես փաստագրված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի պատասխանատուներին Ճշմարտության և արդարադատության կենտրոնի կողմից նախկինում ներկայացված փաստաթղթերում, Ադրբեջանը խախտում է ԱՄԴ-ի և ՄԻԵԴ-ի պարտադիր ուժ ունեցող որոշումները[6]: Այս հրատապ զեկույցում Կենտրոնը ցանկանում է ուշադրություն հրավիրել Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում սովի վերահաս վտանգի վրա: Այս երեք գյուղերի գտնվելու վայրը տե՛ս ստորև ներկայացված քարտեզի վրա:

6. 2023 թվականի ապրիլի 23-ին Ադրբեջանը միակողմանի և հարկադրական որոշում է կայացրել իր զինված ուժերի միջոցով փակել Լաչինի միջանցքի երկայնքով անցնող կամուրջը Հակարի գետի վրա: Այս գործողությունը դատապարտել են ԱՄՆ-ի և Եվրամիության պաշտոնյաները: Նշված երեք գյուղերի բնակչությունն այժմ էլ ավելի է մեկուսացված, քանի որ նրանք չեն կարող հասնել ո՛չ Հայաստան, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղի մնացած շրջաններ:

[6] Տե՛ս, օրինակ, Ճշմարտության և արդարության կենտրոնի *Զեկույցը Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի և Ադրբեջանի կողմից Արդարադատության միջազգային դատարանի որոշումների խախտման վերաբերյալ* (23 մարտի 2023թ.),https://www.cftjustice.org/wp-content/uploads/2023/03/REPORT-on-the-Right-to-Development-Regarding-the-Hum anitarian-Crisis-in-Nagorno-Karabakh-and-Azerbaijans-Violation-of-the-orders-of-the-the-International-Court-of-Justice.pdf.

7. ՃԱԿ-ին հայտնի է, որ 80 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 20 երեխաներ, այս պահին վտանգավոր մեկուսացման մեջ են գտնվում Մեծ Շեն գյուղում: 75 քաղաքացիական անձինք, որոնցից 15-ը երեխաներ են, նույնպես մեկուսացվել են Հին Շենում: Մեկուսացած ամենամեծ թվով բնակչությունն ապրում է Եղցահողում, որտեղ 153 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 33 երեխա, կտրված են մնում թե՛ Հայաստանից, և թե՛ Լեռնային Ղարաբաղի մնացած շրջաններից: Հին Շենի մի քանի գյուղացիներ կապ են հաստատել մի խումբ ռուս խաղաղապահների հետ, ովքեր տեղեկացրել են, որ իրենց ուղևորությունները դեպի Հայաստանի Գորիս քաղաք սահմանափակ են: Ավելի վաղ գյուղացիները փոքր խմբերով գնում էին Գորիս, որտեղից սնունդ էին գնում: Գորիսը միակ վայրն էր, որտեղ գյուղացիները կարող էին հասնել սնունդ ձեռք բերելու համար. այնտեղ կարելի էր հասնել Հակարի գետի կամրջով, որն այժմ ադրբեջանական զինուժն արգելափակել է: Բոլոր երեք գյուղերի ղեկավարներն էլ նշել են, որ քանի դեռ Հակարի գետի կամրջի վրա գոյություն ունի ադրբեջանական ռազմական ներկայություն, գյուղացիները չեն կարողանա օգտվել դրանից:

8. Մեծ Շենից 6 քաղաքացիական անձ, այդ թվում՝ երեք երեխա, մնացել են Գորիսում, ովքեր ապրիլի 23-ին մեկնել էին այնտեղ սնունդ գնելու, և այժմ չեն կարողանում վերադառնալ իրենց գյուղ: Բացի այդ, ողջ Մեծ Շեն գյուղին սպասարկող գյուղի բուժքույրը նույնպես մնացել է Գորիսում, ուր նա մեկնել էր գյուղի տարեց բնակիչների համար դեղորայք գնելու նպատակով: Գյուղացիների մոտ մտավախություն է առաջացել, որ իրենց գյուղն այժմ ամբողջովին մնացել է առանց վերապատրաստված բուժանձնակազմի: Մեծ Շենի 10 քաղաքացիական անձինք 70 տարեկանից բարձր են և դեղորայքի կարիք ունեն, որոնք սովորաբար Գորիսից էին ձեռք բերում, քանի որ գյուղում չկա դեղատուն: Այս մարդիկ և նրանց ընտանիքները լրջորեն մտահոգված են, որ այժմ նրանք չեն կարողանա ժամանակին ձեռք բերել կենսական նշանակություն ունեցող այդ դեղորայքը: Հին Շենում շատերը նույնպես դեղորայքի կարիք ունեն: Քանի որ Հին Շենում նույնպես դեղատուն չկա, այստեղ ևս գյուղացիները վախենում են դեղորայքի բացակայության պատճառով առողջության լուրջ հետևանքներից: Երկու քաղաքացիական անձ Եղցահողից նույն կերպ մնացել են Գորիսում, ովքեր գնացել էին այնտեղ սննդամթերք գնելու նպատակով: Նրանք փորձել են վերադառնալ տուն, բայց սահմանը հսկող հայկական զինված ուժերի ծառայողները հայտնել են, որ ադրբեջանական զորքերը փակել են Հակարի գետը, ուստի նրանք տուն վերադառնալու հնարավորություն չունեն:

9. Այս երեք գյուղերը փոքր են և ինքնուրույն չեն. սնունդ և կենսական նշանակության

դեղորայք ձեռք բերելու համար հարկավոր է հասնել Գորիս: Այդտեղ հասնելու հնարավորության բացակայության դեպքում գյուղերի քաղաքացիական բնակչությունը հումանիտար լուրջ հետևանքներ կկրի: Մեծ Շենի բնակիչների գնահատմամբ՝ գյուղում ապրելու համար սննդամթերքի պաշարները կբավականացնեն մեկ ամիս: Հին Շենի բնակիչների հաշվարկով՝ պաշարները կբավականացնեն ընդամենը մեկ շաբաթ, իսկ եղցահողցիների գնահատմամբ՝ իրենք ունեն 10-15 օրվա սննդի պաշար: Ավելի վաղ՝ 2023 թվականին մարտին դադարեցվել էր Լեռնային Ղարաբաղի գազամատակարարումը, որն ապահովվում է Հայաստանից եկող, բայց Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքով անցնող խողովակներով: Թեև Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի գազամատակարարումը վերականգնվել է, ավելի փոքր շատ բնակավայրեր, այդ թվում՝ Մեծ Շենը, Հին Շենը և Եղցահողը, դեռևս գազ չունեն: Գյուղացիները նաև հայտնել են էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների մասին, որը նույնպես ապահովվում է Ադրբեջանի տարածքով անցնող էլեկտրահաղորդման գծերով:

I. Իրավական հետևանքներ

Ա. Մարդու իրավունքների միջազգային օրենսդրություն

10. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (ICESCR)[7] և Մարդու իրավունքների ոլորտում միջազգային սովորութային իրավունքի համաձայն, ինչպես արտացոլված է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[8], Ադրբեջանը պարտավոր է հարգել առողջության, կրթության, բավարար կենսամակարդակի, խմելու ջրի և ջրահեռացման իրավունքները[9]: Դաշնագրով նախատեսված մարդու իրավունքների ոլորտում այս պարտավորություններն այնքան հիմնարար են, որ դրանք շարունակում են կիրառվել նույնիսկ զինված հակամարտությունների իրավիճակներում[10], ներկայացնելով իրավունքների նվազագույն չափանիշ, որը պետք է հարգել նույնիսկ զինված հակամարտության ժամանակ[11]: Այդ իրավունքների սահմանափակումները կիակասեն

---

[7] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 16-ին) 993 UNTS 3 (ICESCR) Հոդված 2(1), 11(1), 12.

[8] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ ԳԱ Ակտ 217(III) A (10 դեկտ. 1948թ) (UDHR) Հոդվ. 25(1). Հռչակագրի սովորական կարգավիճակ, տե՛ս *Նամիբիայում Հարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքները պետությունների համար՝ հակառակ Անվտանգության խորհրդի 276 բանաձևին (1970թ)* (Խորհրդատվական կարծիք) [1971թ] ԱՄԴ Ակտ 16, 76 (փոխնախագահ Ամունի առանձին կարծիք); *Միացյալ Նահանգների դիվանագիտական և հյուպատոսական աշխատակազմը Թեհրանում (Միացյալ Նահանգներն ընդդեմ Իրանի)* (Վճիռ) [1980թ.] ԱՄԴ Ակտ 3, կետ 91; Անդրես Ազիլար (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ ներկայացուցիչ), «Իրանի Իսլամական Հանրապետությունում մարդու իրավիճակների մասին նախնական զեկույց» (1985թ) UN Doc E/CN.4/1985/20, 14–15 կետեր; Թեոդոր Մերոն «*Մարդու իրավունքները և մարդասիրական նորմերը որպես սովորութային իրավունք*» (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն 1989թ) 95–96

[9] ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե (ՄԱԿ ՏՍՄԻԿ) «Ընդհանուր մեկնաբանություն No. 3: Մասնակից պետությունների պարտավորությունների բնույթը» (1990թ.) UN Doc E/1991/23, կետ 10 (առաջին անհրաժեշտության սննդամթերքից, բուժօգնությունից, հիմնական կացարանից և կրթության ամենատարրական ձևերից զրկելու մասին՝ որպես Դաշնագրի Հոդված 2(1)-ի խախտում; ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 15. Ջրի իրավունք (2002) UN Doc E/2003/22, կետ 3 (ջրի իրավունքը որպես անփոխարինելի իրավունք՝ համաձայն Դաշնագրի 11(1)-րդ հոդվածի); ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 4. Պատշաճ կացարան ունենալու իրավունք» (1991թ) UN Doc E/1992/23, կետ 8(b), (d), 11 (պատշաճ կացարան ունենալու իրավունքը որպես անփոխարինելի իրավունք Դաշնագրի Հոդված 11(1)-ի համաձայն); ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 14. Առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունք (2000թ) UN Doc E/CN.12/2000/4, կետեր 4, 5, 11, 12(b), 34, 36, 51 (Դաշնագրի համաձայն առողջության իրավունք)

[10] *Պաղեստինի օկուպացված տարածքում պատի կառուցման իրավական հետևանքները* (խորհրդատվական եզրակացություն) [2004թ.] ԱՄԴ Ակտ 136, կետ 106, *Զինված գործողություններ Կոնգոյի տարածքում (Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունն ընդդեմ Ուգանդայի)* (Գործի էությունը) [2005թ.] ԱՄԴ Ակտ 168, կետ 216, *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառումը (Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության)* (Ժամանակավոր միջոցներ) [2008թ.] ԱՄԴ Ակտ 353, կետ 112, Ուիլյամ Շաբաս 'Lex Specialis? Belts and Suspenders? The Parallel Operation of Human Rights Law and the Law of Armed Conflict, and the Conundrum of *Jus ad Bellum*' (2007) 40 *Israel Law Review*, էջ 592, 598.

[11] ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 3 (n 9) կետ 10; ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 14 (n 9) կետեր 43–44; Ժիլե Ջիակա *«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները զինված հակամարտություններում»* (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն 2014թ) 26,81–82; Քեթրին Ֆուլթեր և Լեոնարդ Ռուբենշտեյն «Մարդու իրավունքների մոտեցումը առողջապահությանը

Դաշնագրի առարկային և նպատակին նույնիսկ զինված հակամարտությունների ժամանակ, և հետևաբար կհանդիսանան Դաշնագրի խախտում[12]: Ադրբեջանը պարտավոր է հարգել այդ իրավունքները ինչպես իր տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, երբ իր գործողությունները կամ անգործությունը կանխատեսելի հետևանքներ են ունենում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման համար[13]:

11. Հատուկ ուշադրության է արժանի բավարար սննդի իրավունքը: ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն նշել է, որ այդ իրավունքն իրականացվում է «երբ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա, միայնակ կամ այլոց հետ միասին, մշտապես ունի բավարար սննդի կամ դրա ձեռքբերման միջոցների ֆիզիկական և տնտեսական հասանելիություն[14]: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետը[15] ճանաչում է բավարար սննդի իրավունքը բավարար կենսամակարդակի իրավունքի[16] շրջանակներում: Բացի այդ, Դաշնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչում է «սովից զերծ մնալու՝ յուրաքանչյուրի հիմնարար իրավունքը»[17]: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նաև մեկնաբանել է կյանքի իրավունքը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն, որպես պետությունների պարտավորություն՝ կանխել վատ սնվելը[18]: Մեծ Շենի, Հին Շենի և Եղցահողի ողջ բնակչությունը զրկված է մարդու իրավունքների օրենսդրությամբ նախատեսված այս իրավունքներից:

12. Բացի այդ, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան և ճանաչում է երեխաների՝

հակամարտության պայմաններում» (2013թ) 95 *International Review of the Red Cross* 167, 183; Ֆիլիպ Ալսթոն և Ջերար Քուին «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով մասնակից պետությունների պարտավորությունների բնույթը և շրջանակը» (1987թ) 9 *Human Rights Quarterly* 156, 201

[12] ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 19 «Անձնական անձեռնմխելիության իրավունք» (2008թ) UN Doc E/C.12/GC/19, կետ 65; ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 15 (n 9) կետ 40; ; ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 14" (n 9) կետ 47.

[13] Դաշնագրի (n 7) Հոդվ. 2(1) Դաշնագրի տարածքային կիրառման վերաբերյալ, տե՛ս ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն 3(n 9) կետեր 13–14; ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 21 «Մշակութային կյանքով զբաղվելու՝ յուրաքանչյուրի իրավունքը» (2009)UN Doc E/C.12/GC/21, կետ 58; Ջիակա (n 10) 115–25; Մեթյու Քրեյվն *«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր. դրա զարգացման հեռանկարը* (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն 1995թ) 144

[14] ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 12. Բավարար սննդի իրավունք (Հոդվ. 11) (12 մայիսի 1999) UN Doc E/C.12/1999/5, կետ 6

[15] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (n 8) Հոդված 25(1)

[16] ՏՍՄԻՄԴ (ICESCR) (n 7) Հոդված 11(1)

[17] Նույնը, Հոդված 11(2)

[18] ՄԱԿ ՏՍՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն No. 36 6-րդ հոդվածի վերաբերյալ՝ Կյանքի իրավունք (9 սեպտ. 2019թ) UN Doc CCPR/C/GC/36, կետ 26: Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին) 999 UNTS 171, Հոդվ. 6(1)

բավարար սննդի և սնվելու իրավունքը իր 24-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) և (ե) կետերով՝ առողջության իրավունքի համատեքստում, իսկ 27-րդ հոդվածի 3-րդ կետով՝ բավարար կենսամակարդակի իրավունքի համատեքստում[19]: Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում բնակվող ընդհանուր թվով 63 երեխաները, ովքեր ներկայումս սննդունդ ձեռք բերելու հնարավորություն չունեն, զրկված են Կոնվենցիայի համաձայն այդ իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան ճանաչում է բավարար սննդի իրավունքը առողջության, բավարար կենսամակարդակի և սոցիալական պաշտպանության իրավունքների համատեքստում՝ համապատասխանաբար 25(գ) և 28(1) հոդվածներով[20]: Հարկ է նշել, որ մերժվում է Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում հաշմանդամություն ունեցող անձանց՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի (բ) և (ե) ենթակետերով[21] նախատեսված առողջության իրավունքը, ովքեր կենսական նշանակության դեղերի կարիք ունեն:

13. Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերի բնակիչներին սնունդ և դեղորայք ձեռք բերելու հնարավորությունից զրկելը կարող է նշանակել որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ բնաջնջման ձևով, որը Միջազգային քրեական դատարանի Հռոմի կոնոնադրության 7-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը սահմանում է որպես «կյանքի այնպիսի պայմանների դիտավորյալ ստեղծում, ինչպիսիք են, ի թիվս այլոց, սննդամթերք և դեղորայք ձեռք բերելու հնարավորությունից զրկում, ինչը միտված է բնակչության մի մասի ոչնչացմանը»[22]: Եթե Լեռնային Ղարաբաղի ժողովրդին առաջին անհրաժեշտության ապրանքներից մեկուսացնելու՝ Ադրբեջանի քաղաքականությունը հանգեցնի զանգվածային զոհերի, ապա բնաջնջման ձևով մարդկության դեմ հանցագործության տարրերը, ամենայն հավանականությամբ, կարող են համարվել բավարարված[23]: Հաշվի առնելով կոնֆլիկտի էթնիկական համատեքստը, այս գործողությունները կարող են հիմնավոր կերպով դիտվել որպես խտրական վերաբերմունք հայերի նկատմամբ՝ ելնելով նրանց ազգությունից և էթնիկ պատկանելիությունից, ինչը նշանակում է, որ նման վարքագիծը կարող է նշանակել

[19] «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (ընդունվել է 1989թ. նոյեմբերի 20-ին) 1577 UNTS 3, Հոդվ. 24(2)(գ), (ե), 27(3)
[20] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 13-ին) 2515 UNTS 3, Հոդվ. 25(գ), 28(1).
[21] Նույնը, հոդված 26(բ), (գ)
[22] Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրություն (ընդունվել է 1998թ. հուլիսի 17-ին) 2187 UNTS 3 (Հռոմի կանոնադրություն) Հոդված 7(2)(բ)
[23] *Գլխավոր դատախազն ընդդեմ Կայիշեմայի* (Դատական որոշում) ICTR-95-1-T (May 21, 1999) կետ 144; *Դատախազն ընդդեմ Կրիստիչի* (Դատական որոշում) IT-98-33-T (2 օգոստ. 2001թ) կետ 503; Կայ Ամբոս *«Միջազգային քրեական իրավունքի տրակտատ»*, հատոր II (2-րդ հրտ., Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն) 88–89

մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ հալածանքի ձևով[24]: Նախկինում սովը միջազգային տրիբունալների կողմից բնութագրվում էր որպես հալածանք[25]:

Բ. Միջազգային մարդասիրական իրավունք

14. Միջազգային մարդասիրական սովորութային իրավունքը (ՄՄԻ) նախատեսում է, որ «պատերազմի վարման մեթոդներն ու միջոցները, որոնք կբացառեն քաղաքացիական ռազմական նպատակների միջև որևէ տարբերակում … արգելված են»[26]: Նույն կերպ, Ժնևի կոնվենցիաների Առաջին լրացուցիչ արձանագրության 57-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է պետություններին «մշտապես հոգ տանել քաղաքացիական բնակչության, քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների պաշտպանության մասին»[27]: Շրջափակումը հումանիտար ծանր հետևանքներ է ունեցել Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության համար: Ընդ որում, Ադրբեջանը չի տարբերակել քաղաքացիական և ռազմական օբյեկտները, ինչպես պահանջվում է ՄՄԻ-ով: Թեև որոշ ադրբեջանցի պաշտոնյաներ ենթադրում են, որ Լաչինի ճանապարհը և Հակարի գետի կամուրջը ինչ-որ պահի օգտագործվել են ռազմական տեխնիկա տեղափոխելու համար, այնուամենայնիվ, քաղաքացիական անձանց թիրախավորելու արգելքը մնում է ամբողջական՝ համաձայն միջազգային սովորութային իրավունքի. ռազմական կարիքները երբեք չեն կարող օգտագործվել որպես արդարացում՝ զինված հակամարտության ժամանակ քաղաքացիական անձանց թիրախավորելու համար[28]:

15. Լաչինի միջանցքի և Հակարի գետի կամրջի արգելափակումը այլ կերպ ձևակերպել որպես առանց խտրության հարձակումներ Լեռնային Ղարաբաղի խաղաղ (քաղաքացիական) բնակչության վրա, այլ ոչ թե նրանց դեմ ուղղված հարձակումներ: Առաջին լրացուցիչ արձանագրության 51-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ

---

[24] Տե՛ս Հռոմի կանոնադրությունը (n 22) Հոդված 7(1)(ը); Քրիստոֆեր Հոլ և Ջոզեֆ «Հետապնդում» Օտտո Տրիֆտերերում և Կայ Ամբոսում, *«Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը. մեկնաբանություն»* (3rd edn, C.H. Beck 2016) 275–82.

[25] Տե՛ս, օրինակ, *Ֆրանսիան ընդդեմ Գյորինգի* (1947թ) 41 AJIL 172, 247; *Գլխավոր դատախազն ընդդեմ Այխմանի* (1968թ) 36 ILR 18, 241 (Երուսաղեմի շրջանային դատարան); *Դատախազն ընդդեմ Բլաշկիչի* (Դատական որոշում) IT-95-14-T (3 մարտի 2000թ.) կետ 224

[26] *Միջուկային զենքի սպառնալիքի կամ օգտագործման օրինականությունը* (խորհրդատվական կարծիք) [1994 ԱՄԴ Ակտ 226, կետ 95: Տե՛ս նաև *Դատախազն ընդդեմ Գալիչի* (Բողոքարկման որոշում) IT-98-29-A (30 նոյ. 2006թ) կետ 190; *Դատախազն ընդդեմ Միլոշևիչի* (Բողոքարկման որոշում) IT-98-29/1-A (12 նոյ. 2009թ) կետ 53; *Զինված գործողություններ Կոնգոյի տարածքում* (n 10) կետ 208

[27] 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրություն, որը վերաբերում է միջազգային զինված ընդհանրումների զոհերի պաշտպանությանը (ընդունվել է 1977թ. հունիսի 8-ին) 1125 UNTS 3 (Լրացուցիչ արձանագրություն I) Հոդվ. 57(1)

[28] *Դատախազն ընդդեմ Բլաշկիչի* (Բողոքարկման որոշում) IT-95-14-A (29 հուլիսի 2004թ.) կետ 109; *Դատախազն ընդդեմ Կորդիչի* (Բողոքարկման որոշում) IT-95-14/2-A (26 հունվ. 2005թ) կետ 52; *Միլոշևիչի* Բողոքարկման որոշում (n 26) կետ 53

հարձակումն ոչ ընտրողական բնույթի է, եթե այն ուղղված չէ կոնկրետ ռազմական օբյեկտների դեմ, կիրառվում են ռազմական գործողությունների վարման մեթոդներ կամ միջոցներ, որոնք չեն կարող ուղղված լինել կոնկրետ ռազմական օբյեկտների դեմ, կամ կիրառվում են ռազմական գործողությունների վարման մեթոդներ կամ միջոցներ, որոնց հետևանքները չեն կարող սահմանափակված լինել, և, հետևաբար, կարող են առանց խտրության հարվածել ռազմական օբյեկտներին և քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներին[29]: Առաջին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է «ռազմական օբյեկտները» որպես «օբյեկտներ, որոնք իրենց բնույթով, տեղադրությամբ, նշանակությամբ կամ գործածությամբ արդյունավետ կերպով նպաստում են ռազմական գործողություններին, և որոնց ամբողջական կամ մասնակի ոչնչացումը, զավթումը կամ չեզոքացումը տվյալ պահին առկա հանգամանքներում բացահայտ ռազմական առավելություն է տալիս»[30]: Անհնար է հիմնավորված փաստարկ ներկայացնել առ այն, որ ամբողջ Լեռնային Ղարաբաղը՝ Լաչինի միջանցքի արգելափակման ազդեցությունը կրող տարածքը, կարող է ընդհանրապես որակվել որպես ռազմական օբյեկտ: Ընդ որում, Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերը բացառապես քաղաքացիական բնակավայրեր են: Ավելին, դեպի ծով ելք չունեցող անկլավ տանող միակ ճանապարհի արգելափակումը, այլապես ամբողջովին շրջապատված թշնամական տարածքով, միանշանակ «մարտական գործողություններ վարելու այնպիսի մեթոդ կամ միջոց է, որը չի կարող ուղղված լինել կոնկրետ ռազմական օբյեկտի վրա»: Եվ վերջապես, ևս մեկ անգամ հաշվի առնելով շրջափակման բնույթը և Լեռնային Ղարաբաղի և երեք գյուղերի բնակիչների իրավիճակը՝ շրջափակումների հետևանքները չեն կարող սահմանափակվել, ինչպես պահանջվում է Լրացուցիչ I արձանագրությամբ, և, հետևաբար, իրենց բնույթով կարող են առանց խտրության ազդել ռազմական օբյեկտների և քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական նշանակության օբյեկտների վրա, ինչպես արգելված է ՄՄԻ-ով:

[29] Լրացուցիչ արձանագրություն I (n 27) Հոդվ. 51(4)
[30] Նույնը, Հոդվ. 52(2)

16. Բացի այդ, Առաջին լրացուցիչ արձանագրության 54-րդ հոդվածի 2-րդ կետով արգելվում են այնպիսի գործողություններ, որոնք ոչ պիտանի են դարձնում քաղաքացիական բնակչության գոյատևման համար անփոխարինելի օբյեկտները …՝ հատուկ նպատակ ունենալով թույլ չտալ դրանց օգտագործումը քաղաքացիական բնակչության կամ հակառակորդ պետության կողմից, որպես գոյության պահպանման միջոց, անկախ դրդապատճառներից, լինի դա քաղաքացիական անձանց սովամահ անելու, նրանց հեռանալ հարկադրելու նպատակով կամ որևէ այլ պատճառով»[31]: Լաչինի միջանցքն, անկասկած, «անփոխարինելի է Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության գոյատևման համար», որն այդ տարածաշրջանն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհն է, որի միջոցով ապահովվում են բնակչության հիմնական կարիքները, այդ թվում՝ սննդամթերք և դեղորայք: Նմանապես Հակարի գետի կամուրջը կարելի է բնութագրել որպես Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերի «քաղաքացիական բնակչության գոյատևման ամփոխարինելի օբյեկտ», իսկ ադրբեջանական զինուժի կողմից շրջափակումը այն դարձնում է ոչ պիտանի/անօգուտ:

17. Բացի այդ, Առաջին լրացուցիչ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով արգելվում է հավաքական (կոլեկտիվ) պատժի կիրառումը, ինչը ըստ Հարավային Սուդանում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ կարող է որակվել որպես տարածաշրջանի կարևոր ռեսուրսների զանգվածային զրկում[32]: Սիերա Լեոնեի հատուկ դատարանի Վերաքննիչ պալատը պարզաբանել է, որ հավաքական պատիժ ներկայացնող հանցագործության նպատակների համար «պատիժը» ոչ ընտրողական պատիժ է, որը կոլեկտիվ կերպով կիրառվում է անձանց նկատմամբ անգործության կամ գործողությունների համար, որոնց համար նրանցից ոմանք կարող են կամ նրանցից ոչ մեկը չի կարող պատասխանատվություն կրել[33]: Ադրբեջանական պետական հռետորաբանությունը հայերին հաճախ անվանում է «ահաբեկիչներ», ընդ որում, ողջ էթնիկ հայ բնակչությանը հանցագործության հավաքական վերագրումը ակնառու է և հաճախ համատարած տեղ է գրավում ադրբեջանական դիսկուրսում[34]: Լաչինի միջանցքի և Հակարի

[31] Նույնը, Հոդվ 54(2)
[32] Հարավային Սուդանում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով «Մեզ ոչինչ չի մնացել. սովը որպես պատերազմի վարման մեթոդ Հարավային Սուդանում» (5 հոկտ. 2020թ) UN Doc A/HRC/45/CRP.3, կետ 9
[33] *Դատախազն ընդդեմ Ֆոֆանա (բողոքարկման որոշում)* SCSL-04-14-A (28 մայիսի 2008թ) կետ 223
[34] Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի ռասայական խտականության վերացման կոմիտեի «Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի 10-12-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ» (22 սեպտ. 2022) UN Doc CERD/C/AZE/CO/10-12, կետ 4(c); Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի «Ադրբեջանի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույց (մոնիթորինգի հինգերորդ շրջափուլ)» (17 մարտի 2016թ.) Council of Europe Doc CRI(2016)17, at 9–10, 16; Թրանսպարենսի ինթերնեյշնլ և այլք «*Հայատյացությունը և*

գետի կամրջի արգելափակումը կարող է իրենից ներկայացնել քաղաքացիական բնակչության նկատմամբ հավաքական պատիժների կիրառում՝ ՄՄԻ-ի խախտմամբ:

18. Ժնևի չորրորդ կոնվենցիայի 23-րդ հոդված ևս պարտավորեցնում է Ադրբեջանին «թույլատրել բժշկական և հիվանդանոցային պարագաների, ինչպես նաև կրոնական ծիսակատարություններ իրականացնելու համար անհրաժեշտ պարագաների բոլոր խմբաքանակների ազատ անցումը, որոնք նախատեսված են միայն քաղաքացիական անձանց համար», նույնիսկ եթե այդպիսի քաղաքացիական անձինք պատկանում են թշնամու բնակչությանը[35]: Մանրամասն ներկայացնելով այս պարտավորությունը՝ Առաջին լրացուցիչ արձանագրության 54-րդ հոդվածի 1-ին մասը մասնավորապես արգելում է սովը որպես պատերազմելու մեթոդ օգտագործելը[36]: Ինչպես նշել է Հարավային Սուդանում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը.

> «Սով» տերմինը պետք է ընկալվի որպես ոչ միայն սննդից և ջրից, այլև կոնկրետ համատեքստում գոյատևման համար կարևոր այլ ապրանքներից զրկում: Սովի բնույթի հանցագործությունը չի պահանջում, որ զոհերը սովամահ լինեն, այլ միայն այն, որ նրանք դիտավորյալ զրկվեն իրենց գոյատևման համար անհրաժեշտ արժեքներից և օբյեկտներից: Սա կարող է ներառել մարդկանց սննդամթերք ձեռք բերելու հնարավորությունից զրկելը, բնակչության առողջական վիճակի վատթարացումը և մաքուր ջրի հասանելիության խախտումը կամ սննդամթերքով ապահովումը միտումնավոր թույլ չտալը կամ թույլ չտալը օգնություն ցուցաբերել այն դեպքում, երբ քաղաքացիական բնակչության գոյատևումը վտանգված է[37]:

19. Թեև Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումը, անկասկած, զրկել է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը սննդից և ջրից, այն նաև խոչընդոտեց քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ մի շարք այլ ռեսուրսների, առաջին հերթին՝ դեղորայքի մուտքը Լեռնային Ղարաբաղ: Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 8(2)(բ)(xxv) հոդվածը, որը փոփոխվել է 2019 թվականի դեկտեմբերին, որակում է հետևյալը որպես ռազմական հանցագործություն, որը կատարվել է միջազգային զինված հակամարտության ժամանակ. «Քաղաքացիական բնակչության

ռասիզմը Ադրբեջանում 2021թ. (2022) 17–18

[35] Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիա (ընդունվել է 1949թ. օգոստոսի 12-ին) 75 UNTS 287 (Ժնևի կոնվենցիա IV) Հոդվ. 23(1)

[36] Առաջին լրացուցիչ արձանագրություն (n 27) Հոդվ. 54(1)

շրջանում սովի կանխամտածված օգտագործումը որպես պատերազմ վարելու մեթոդ՝ զրկելով նրանց գոյատևման համար անհրաժեշտ արժեքներից, ներառյալ հումանիտար օգնության մատակարարումները կանխամտածված կերպով խոչընդոտելը, ինչպես նախատեսված է Ժնևի կոնվենցիաներով»[38]: Թեև ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը ներկայումս Հռոմի կանոնադրության մասնակից պետություններ չեն, այդուհանդերձ, Հայաստանը սկսել է դրան միանալու գործընթացը և ակնկալվում է, որ կանոնադրությունը պաշտոնապես կվավերացնի 2023 թվականին:

Եզրակացություն

Հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում օրեցոր վատանում է: Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերի քաղաքացիական բնակչությանը շաբաթներ է բաժանում սովից: Միջազգային հանրության ներգրավվածությունը կենսական նշանակություն ունի այս վերահաս աղետի լուծման համար: Ճշմարտության և արդարադատության կենտրոնը կոչ է անում Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Ռուսաստանի Դաշնության կառավարություններին ՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, անհապաղ և վճռական գործողություններ ձեռնարկել՝ վերջ դնելու այստեղ նկարագրված հումանիտար ճգնաժամին: ՃԱԿ-ը, մասնավորապես, նշում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահների՝ որպես 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության համաձայն Լաչինի միջանցքի և ընդհանրապես Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխավորի պարտավորությունները[39]: Ժամանակը թանկ է. Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը մոտ է վտանգավոր սահմանագծին: Միջազգային դերակատարները պետք է օպերատիվ գործեն՝ տարածաշրջանում մարդու հիմնարար իրավունքների իրացումն ապահովելու և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումները կանխելու համար:

---

[37] Հարավային Սուդանում ՄԱԿ-ի Միջազգային իրավունքների հանձնաժողով (n 32) կետ 36
[38] Հռոմի կանոնադրություն (n 22) Հոդված 8(2)(b)(xxv)
[39] Տե՛ս Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրախետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը (11 նոյեմբերի 2020թ) UN Doc S/2020/1104, կետեր 3, 6